


ԻՆՉՈՐԻ ՅԻՍՈՒՍԻ ՄԵՌԱԾ ՕՐԸ ԱԿԱԳ ՈՒՐԲԱԹ, ԱՅՍԻՆՔՆ ՄԵԾ ՈՒՐԲԱԹ ԿԸ ԿՈՉԵՆՔ

ԻՐ ԿԵԱՆՔԸ



Կըսուի թէ Յիսուս Քրիստոս միակ անձն էր որուն գլխաւոր նպաստակը մեռնիլ էր: Թէեւ ան Աստուած էր, ան ընարեց երկինքը թողով եւ ծնիլ իբր մարդ: Թէեւ շատ քիչ գիտցուած էր սկիզբի կեանքին մասին, երբ ան երեսուն տարեկան էր ան մարդոց քարոզեց որ ապաշխարհն էւ Աստուածոյ դասնան: Ան նաեւ յատարարեց թէ ինք Աստուածոյ որդին էր եւ ամէն իշխանութիւն ունէր ստեղծագործութեան վրայ: Ան բժշկեց կաղերը, անգամալոյծները, կոյցերը եւ համրերը, եւ անոնք որոնք սոսկալի հիւանդութիւններով կը տառապէին ինչպէս բորոսները: Ան նոյնիսկ մեռելները յարուց եւ հազարներ կերակրեց մի քանի կառոր ստեսաեղիններով:

Արգեօք Յիսուս իր այս սքանչելի գործերուն համար երախտագիտութիւն ստացա՞ւ: Ոչ: Ան ախոռի մը ծնաւ եւ երբ մանուկ էր զինք կը փնտաէին որ մեռցնեն: Երբ չափահաս էր, զինք կամբասանէին կեղծաւոր եւ գեւերու հետ գործող: Ան լրուած էր իր ընտանիքն եւ ընկերներն, մերժուած, ծալրուած, վրան թքնուած եւ իբր ոճրագործ դատուած: Մարդկութեան վերջին գործը եղաւ զինք խարազանել, զիսուն վրայ փուշէ պսակ մը դնել, ձեռքերը քամել եւ խաչէ մը կախել մինչեւ որ մեռնի մեծ ոճրագործի արժանի մահով մը: Բայց երեք օր վերջը ան գերեզմանէն յարեաւ լրան կենդանութեամբ:

ՊԱՏՃԱՌԸ

Յիսուս ստապուա՞ծ էր այդ բոլոր չարչարանքներուն ենթարկաւելու: Մէկ բառով՝ ոչ: Երբ Աստուած ան կրնար իր ուզամծը ընել: Ան կրնար մեղ անտեսել: Ուրեմն ինչո՞ւ ան ընարեց չարչարուիլ: Ան ուզեց չարչարիլ որպէսզի ան մեղ Աստուածոյ դարձնէ եւ Աստուած փառաւորուի:

Ինչպէս կարելի կըլլաց Յիսուսի չարչարանքը եւ մահը մեղ Աստուածոյ դարձնէր:

Սորուիլ: Քանի որ Յիսուս վեցուց մեր մեղաւոր ըլլալուն լուրջ արգելքը: Բոլորս ալ, նախագահէն սկսեալ մինչեւ կղերականը, հարուստախն սկսեալ մինչեւ ամէնէն աղքատա՞՝ Աստուածոյ հանդէպ ոճիու գործած ենք: Բոլորս ալ անհնազանդ եղած ենք արդար եւ սուրբ Աստուածոյ:

Երբեմն կը մոռնանք որ Աստուած բացարձակ իշխանութիւն ունի մեր կեանքերուն վրայ: Աստուածոյ հեղինակութիւնը աւելի մեծ է քան կառավարութեան մը հեղինակութիւնը: Ամէն կառավարութիւն օրէնքներ ունի: Երբ անձ մը կառավարական օրէնքներուն հակառակ կը գործէ, պէտք է պատժուի: Նոյնպէս ալ Աստուած օրէնքներ ունի, եւ եթէ մենք իր օրէնքներուն հակառակ կը գործենք, պէտք է պատժուինք,

Ի՞նչպէս Աստուածոյ օրէնքին հակառակ կը գործէնք: Ամէն ատեն որ սիսալ մը գործենք, Աստուածոյ անհնազանդ կըլլանք: Ասիկա կը կոչուի մեղք: Մեղքը միշտ մեղ Աստուածէ կ'անջատէ: Ես. 59:2 կըսէ. «Զերու ձեր Աստուածոյն մէջտեղ բաժանում ձգողը ձեր անօրէնութիւնները եղան ...» Քանի օր Աստուած կատարեալ սուրբ է, նոյնիսկ պղտիկ մեղք մը մեծ անգունդ մը կը դնէ մեր եւ Աստուածոյ միշել զոր չենք կարու կարել:


Մեր մեղքը ուրիշ հետեւանք մըն ալ ումի: Ոչ միայն մեղքը մեղ Աստուածէ կը զատէ, իր սուրբ արգարութիւնը կը պահանջ նաեւ որ մենք մեր մեղքին պատիժը կրենք: Մեր պատիժը կ'որոշուի ոչ միայն մեր մեղքին չափովը, հապա պատիժը մեր պատճառաւած վնասին համեմատ կըլլայ: Օրինակի համար, եթէ բարկանալով ժայռ մը փշրենք, վնաս մը չենք հասցներ, բայց եթէ բարկանալով մարդ մը մեռցնենք, կը բանտարկութիւնք քանի որ մարդ մը ժայռէն աւելի արժէքաւոր է: Եթէ Աստուածոյ անհնազանդ ըլլանք, Աստուածոյ փառքին վնաս հասցուցած եւ իր կատարեալ ծրագրին արգելք եղած կըլլանք: Հետեւաբար, մեր պատիժը աւելի մեծ է մեր պատճառաւած վնասին համեմատ:

Իւրաքանչիւր մեղք որ կը գործենք մեծ պատիժի արժանի է պայման չէ որ մենք լաւ կամ գէշ անհատներ ըլլանք: Երեւակայէ ոճրագործ մը որ գատաւորին ըսէ. «Զիս ապաս արծակէ քանի որ բազմաթիւ ուրիշ մարդկեր չեմ մեռցուցած»: Իր ոճիուն համար պէտք է պատժուի: Նոյնպէս Աստուածոյ քով բարի կեանք մը չի

կրնար ջնջել նոյնիսկ մէկ մեղք: Անոր համար պէտք ունինք Յիսուսի իբր մեր Փրկիչը: Յիսուս միան է որ լման Աստուած էր եւ լման մարդ եղաւ: Իբր մարդ ան մեր մեղքերը իր վրան առաւ: Երբ ան խաչին վրայ մեռաւ, մեղքին պատիժը կրեց: Բ. Կորնթացիս 5:21 կըսէ. «Վասնզի Աստուած զանիկա որ մեղք չիր գիտեր, մեղի համար մեղաւոր սեպէց, որպէսզի մենք անոր միջոցով Աստուածոյ արգարներն ըլլանք»: Այս համարը կըսէ թէ Յիսուս մեղքին լման հատուցումը կատարեց իր արգարութիւները: Այս է որ պատահէցաւ Աւագ Ուրբաթ օրը: Իր մահովը անդունդին վրայէն կամուրջ մը շինուեցաւ որպէսզի Աստուածոյ չնորդքին արժանանք եւ չպատժուինք:

ՈՒՐԵՄՆ Ի՞ՆՉ ԶԱՏԻԿԸ

Զատիկի Կիրակի առաւօտուն քրիստոնեաներ կը տօնեն Յիսուսի յարութիւնը: Ան ոչ միայն մեր պատիժը իր վրան առաւ, նաեւ ան մահուան յազթեց:



Ի՞ՆՉՊԷՍ ԿՐԿՆԱԳ ՎԱՏԱՀ ԸԼԱՎ ՅԻՍՈՒՍԻ ՅԱՐՈՒԹԵԱՆ

Առաջին. քանի որ առաքեալները պիտի չուղէին մեռնիլ սուտ բանի մը համար: Ցուցա իսկարկով վացին զատ, որ Յիսուսին առաջ մեռաւ, բոլոր առաքեալները մեռցուեցան իրենց հաւատքին համար. Միմոն Պետրոս գլխիվար իսպուեցաւ: Անդէքան, Յակոբոս եւ միւս Սիմոնն ալ խաչուեցան: Բարթողիմէոս ծեծուեցաւ մինչեւ մեռնի: Ինչո՞ւ այսքան մարդիկ սուտ բանի մը համար մեռաւ: Սուտ չիր: Անոնք ձմարտութեան համար մեռան: Յիսուսի յարութեան ձմարտութիւնը վախկուները մարտիրոսներու վերածեց:

Երկրորդ. 500-է աւելի մարդիկ տեսան յարուցեալ Քրիստոսը եւ մը քանիներ չօշափեցին զինք: Ան եփեց, կերակուր կերաւ եւ շատերու խօսեցաւ:

Երրորդ. Սուրբ Գիրքին զատ ուրիշ գրութիւններ Յիսուսի յարութիւն առած ըլլալը կը փաստեն: Ֆլավիոս Ճապահ գովածուու, ոչ քրիստոնեայ պատմաբան մը որ առաջին գարուն ապրեցաւ, այսպէս գրած է. «Այս ժամանակ Յիսուս կար, իմաստուն մարդ մը, եթէ օրինաւոր է զինք մարդ մը կոչել, քանի որ ան սքանչելի գործեր կ'ընէր, ուսուցիչ մը այն մարդոց որոնք ճշմարտութիւնը ուրախութեամբ կ'ընդունէին: Ան իրեն հրապուրեց շատ հրեաներ եւ հեթանոսներ: Ան Քրիստոսն էր: Երբ Պիղատոս, մեր մէջ եղող զլիստոր մարդոց գրգումներով զայն խաչին մահուան դատապարտեց, բայց անոնք որ զինք կը սիրրէին զինք չլքեցին, քանի որ Յիսուս անոնց երեցաւ երրորդ օրը ողջնցած, ինչպէս մարդարէները մարդարէցաց էին իր մասին եւ բիւրաւոր ուրիշ հիանալի բաներ իր մասին: Իր անունով այսպէս կոչուած Քրիստոնեաներու ցեղը, չեն անհետացած»: (Հրէական հոսութիւններ 18,3,3) Ուրիշ հին պատմագէտներ ալ Յիսուսի մասին խօսած են ինչպէս Դասիդուս, հին հումայեցի պատմաբան մը:

Ի՞՞Ն 2 Է ԱՍՈՐ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸԸ

Քանի որ Յիսուս Քրիստոս խաչին վրայ մեռաւ իր հասուցում մեր մեղքերուն, մենք կրնանք ներուիլ եւ յաւիտենականութիւնը անց նել իր սքանչելի ներկայութեան՝ իր չնորհներն ու օրհնութիւնները վայելելով:

Քանի որ Յիսուս Քրիստոս յարութիւն առաւ, ան մեր քովն է ուր որ երթանք: Իր զօրութիւնավ յաղթական կ'ըլլանք ամէն մեղքի եւ աղէտի դէմ: Կրնանք իրեն աղօթել ամէն տեղ, քանի որ գիտենք թէ ան մեզ կը լսէ:

Քանի որ այս բաները ճշմարիտ են, կրնանք վստահ գիտնալ թէ մենք երկինք պիտի երթանք երբ մեռնինք:

Ի՞՞Ն 2 Է ՄԵՐ ՊԱՏԱՍԽԱՆԸԸ

Այս օրհնութիւնները ստանալու համար մենք վերսաին ծնած հաւատացեալներ պէտք է ըլլանք: Այս իր պատահի երբ մենք հաւատուի կ'ընդունինք իր ներումը եւ մեր արդարանալը: Սուրբ Գիրքը կը սորվեցնէ մեզի թէ «Բայց ան որ չփորձեր, բայց կը հաւատայ անոր որ ամբարիչը կ'արթարացնի, անոր հաւատքը իրեն արդարութիւն կը սեպուի» (Հո. 4:5): Աստուած մեզի կը ներէ ոչ թէ մեր բարի գործերուն համար, այլ կը ներէ մեր անկեղծ հաւատքին համար:

Հաւատաք ունենալ ըսել է թէ գուն կը հաւատաս ինչ որ Սուրբ Գիրքը կ'ըսէ քու մասիգ, քու մեղքերուդ եւ Քրիստոսի քու տեղդ մեռնելուն մասին: Աստուծմէն ներում ստանալու համար խոստովանէ որ Ան մաքուր եւ սուրբ է եւ թէ անոր քով գուն յանցաւոր, կորսրւած եւ անօդնալին մեղաւոր մըն ես: Անկեղծօրէն Քրիստոսի իմնդրէ որ քեզ փրկէ եւ իր արժանի տեղը գրաւէ քու կեանքիդ մէջ որպէսզի մեղքէն դասնալով իրեն համար ապրիս: Եթէ այդպէս ընեա, Հոռվմայեցին 10:9 կը խոստանայ «Եթէ քու բերնովդ Յիսուսը Տէր խոստովանիս ու քու սրտիդ մէջ հաւատաս թէ Աստուած զանիկա մեռելներէն յարուց, պիտի փըրկիս»:

Անոնք որոնք Քրիստոսի կը փատահին իրենց փրկութեան համար, Աստուծոյ որդիներ են: Սուրբ Գիրքը կ'ըսէ. «Բայց որոնք որ զինք ընդունեցին, անոնց իշխանութիւն առուած Աստուծոյ սրդիներ ըլլալու, որոնք կը հաւատան իր անուանը» Յովհ. 1:12:

Քու Տէրդ ճանչնալու համար աղօթէ, հաւատարմօրէն սերտէ իր խօսքը, եւ յաճախէ Աստուծոյ խօսքը շիտակ սորվեցնող եկեղեցի մը յաճախէ որպէսզի Աստուած գործածէ քեզ իր փառքին եւ ուրախութեան համար:

Bob La Forge



Եթէ որեւէ հարցում ունիս կ'ուղենք քեզի օգնել: Կրանս գիմել հետեւեալ հասցէին.

Վիգէն Խաչադրեան
Հայաստան, Երեւան 18
Նարբոս Փողոց թիւ 90

Հեռ. (374 10) 57-00-31 կամ 57- 89-62


bunion@arminco.com

Կամ այցելէ մեզ
www.armbunion.org

ՅԻՍՈՒՍԻ ՄԵՌԱԾ ՕՐԸ

ԻՆՉՈՐ ԱԻԱԳ ՈՒԹԵԱԾ

ԿԸ ԿՈՉԵՆՔ



Ի՞՞Ն 2 ԿԸ ՆՇԱՆԱԿԵ՞Վ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍՈՒ ՄԵՌՈՒԱԿ ՄԵՂՔԻ ՀԱՄԱՐ

Ի՞՞Ն 2 ԿԱՊԱԿՑՈՒԹԻՒՆ ՈՒՆԻ ԻՆԾԻ ՀԵՏ ՅԻՍՈՒՍԻ ԽԱՇՀԻՆ ՎՐԱՅ ՄԵՌՈՒԻԼԸ

Ի՞՞Ն 2 ԳԻՏԵՆՔ ՈՐ ՔՐԻՍՏՈՍԻ ՅԱՐՈՒԹԻՒՆԸ ԻՐԱՊԵՍ ՊԱՏԱՀԵՑԱՒ

Ի՞՞Ն 2ՊԷՍ ԿՐՆԱՄ ՅԱՐԱԲԵՐԻ ԿԵՆԴԱՆԻ ԱՍՏՈՒԾՈՅ ՀԵՏ